

ՎՐԹԱՆԵՍ ԱՍԿԵՐՅԱՆԸ և ՆՐԱ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ

Իր գոյության շուրջ երեքհարյուրամյա ժամանակահատվածում Մխիթարյան միաբանությունն իր՝ Վենետիկի և Վիեննայի մասնաճյուղերով ծավալել է հոգևոր, ուսումնակրթական, հրատարակչական, գրական-գեղարվեստական, պատմարանասիրական, բառարանագրական, թարգմանական, բնագիտական և մշակութային բուռն ու բեղմնավոր գործունեություն:

Թարգմանությունները հիմնականում կատարվել են հունարենից, լատիներենից, անգլերենից, ֆրանսերենից, իտալերենից, գերմաներենից, արաբերենից, ռուսերենից: Մխիթարյանների թարգմանական գործունեությունն անխաճեռնողը, ոգեշնչողը և կարևորողը միաբանության հիմնադիր երջանկահիշատակ Մխիթար Սեբաստացին (1676-1749) էր¹: Նրա աշակերտներից մեկը՝ Վրթանես Ասկերյանը, իր ծավալած գործունեությամբ XVIII դ. – XIX դ. սկզբի հայ թարգմանական գսլրոցի մեծագույն գործիչներից մեկն էր:

Վրթանես Ասկերյան լեզվաբանի, տոմարագետի, աստվածաբանի և թարգմանչի բեղմնավոր գործունեությունն ըստ արժանվույն գնահատված է: Նրա անունը հիշատակված է Հայաստանում հրատարակված և ոչ մի հանրագիտարանում: Առավել զարմանալին այն է, որ Վենետիկի Մխիթարյաններն անգամ հավուր պատշաճի չեն ներկայացրել իրենց միաբանության երիցագույն անգամներից մեկին: Վ. Ասկերյանի մահվանից շուրջ մեկ գար անց նրա անունը, Վենետիկի Մխիթարյանների խոստովանությամբ, գեռևս անծանոթ էր հայագիտությամբ զբաղվողներին. «Անծանոթ կամ գէթ քիչերուն ծանօթ գեմք մը, որու անունը նոյն իսկ տպուած «Մատենագրություն» - ներուն մէջ գանուիր կամ խիստ հարեանցի կերպով, բայց մեզ Մխիթարյանցս ծանօթագոյն և պաշտելի, առաջին շարքից տոհմային լեզուն գտնելու մեքենային»²:

Վ. Ասկերյանը ծնվել է 1720 թ. մարտի 15-ին Կ. Պոլսում: Վաղ հասակում «Սուրբ Ղազարոս վանքը ղրկուած և հոն սնած, զարգացած Մխիթարաց ձեռաց տակ, վառուած անոր ագամանդեաց հոգիէն փայլատակած կրակով: Վանքին մեջ իմաստասիրական և աստուածաբանական ու-

¹ Մխիթար Սեբաստացու թարգմանությամբ Վենետիկում 1724 թ. լույս են տեսել «Դրախտ հոգւոյ», իսկ 1729-ին՝ «Ալբերտ Մեծ: Դրախտ հոգւոյ» գրքերը [տե՛ս Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512-1800). Երևան, 1963, էջ 88, 94, 97, 113, 114]:

² Մխիթարեան Յոբելեան. Վենետիկ, 1901, էջ 72:

սումները ընել է ետք 1743 մարտ 9-ին քահանա կը ձեռնագրելի»³: Մահացել է 1810 թ.:

Վ. Ասկերյանը դիտական և թարգմանական մի այնպիսի բեղմնավոր գործունեություն է ծավալել, որն իր նախադեպը չուներ և չունեցավ նաև հետագայում հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում: Մեր մոտավոր հաշվումներով նրա միայն տպագիր թարգմանությունները ծավալը շուրջ 15 հազար տպագիր էջ է: Գիտություն և մշակույթի այս չարքաչ երախտավորը թարգմանություններ է կատարել լատիներենից, հունարենից, իտալերենից: Իրականացրել է նաև հայերենից լատիներեն թարգմանություններ⁴: Լինելով Մխիթար Սեբաստացու սիրելի աշակերտներից մեկը՝ ապագա թարգմանիչը մեծապես համագործակցել է իր ուսուցչի հետ. «Հ. Ասկերեան ինքզինքը կուտայ նախ և առաջ հայկական և լատինական լեզուաց խոր հմտութեան, իր մեծ վարդապետին (ակնարկում է Մխիթար Սեբաստացուն – Ա. Փ.) փափագին համաձայն հայերեն թարգմանելու համար լատին եկեղեցույ Հայոց գրուածները: Չորս հինգ անգամ կը բաղդատէ Աստուածաշունչի հայկական թարգմանութիւնը՝ եօթանասնից լատին թարգմանութեան հետ յոթ տարի անընդհատ աշխատելով և ուսումնասիրելով. այդ ատեն է որ կը շարագրէ լատիներէնէ ի հայ բառարան մը՝ որ ձեռագիր կը մնա»⁵: Ձեռագիր վիճակում են նաև Ասկերյանի շուրջ 10 հատոր ծավալով եկեղեցական տարաբնույթ ուսումնասիրությունները՝ հայերեն և լատիներեն թարգմանությամբ, քարոզներ, ճառեր: Ասկերյանի գիտական ժառանգությունը հիմնականում թարգմանական է:

Նրա ինքնուրույն հեղինակած միակ աշխատությունը սերտորեն առնչվում է հայոց տոնացույցի կազմման խնդիրներին: Մխիթարյան միաբանության բանիմաց և գործունյա վարդապետը շուրջ տասը տարի զբաղվել է հայկական եկեղեցական մատյանները գրչագիր օրինակների հետ բաղդատելու տառապադին աշխատանքով: 1782-ին Վենետիկի «Դեմետրիոս Թեոդոսյանց» տպարանում լույս է տեսել Վ. Ասկերյանի «Մշտնջենաւոր պարգատումար ... Տոնացույց»-ը՝ հայկական տոմարի հավերժ աղյուսակներով հանդերձ», 136 էջանոց աշխատությունը, որում ամփոփված են հեղինակի վերը նշված ուսումնասիրությունների արդյունքները:

Հիշյալ ուսումնասիրությունն, ի թիվս Վենետիկի Մխիթարյանների այլ աշխատությունների՝ լավագույնս են ներկայացվում հայ ժողովրդի հոգևոր մշակույթի տարեգրության էջերում. «Դպրոցի (ակնարկում է Սուրբ Ղազարում հիմնադրված Մխիթարյանների դպրոցը – Ա. Փ.) երբեմնի սաների և մանկավարժների ջանքերով հրապարակ են դալիս մի շարք գիտական աշխատություններ (ընդգծումը՝ Ա. Փ.), որոնք միաժամանակ ուսումնական ձեռնարկներ էին տվյալ դպրոցի համար: Դրանցից են՝ Ստեփանոս Աղոնցի «Ճարտասանություն», Սուրբիաս Աղամալյանի

³ Հայ հանրագիտակ, խմբագրությամբ Հ. Մկրտիչ Պոտուրյանի, Պուրբեշ, 1938, էջ 229:

⁴ Մխիթարեան Յոբելեան, էջ 217:

⁵ Հայ հանրագիտակ, էջ 229:

թվաբանական, Վրթանես Ասկերյանի տոմարագիտական, Ղուկաս Ինճիճյանի աշխարհագրական, Սահակ Պրոնյանի երկրաչափական երկերը»⁶:

Վ. Ասկերյանի թարգմանական գործունեությունը սկզբնավորվել է 1740-ականներին: 1750-ին Վենետիկի Ստեփանոս Որլանտյանի տպարանում լույս են տեսել Ֆրանսիացի աստվածաբան Անտոն Կովզինի⁷ «Փիլիսոփայություն» Ա, Բ և Գ հատորները, իսկ 1751-ին նույն տպարանում՝ վերջին Դ հատորը: Թարգմանությունը գրաբար է կատարված լատիներեն բնագրից, ընդհանուր ծավալը 2386 էջ (հ. Ա, 482 էջ, հ. Բ, 591 էջ, հ. Գ, 686 էջ, հ. Դ., 627 էջ):

«Փիլիսոփայություն» հայերեն թարգմանությունն այն եզակի գործերից է, որն սկսվել է Մխիթար Սեբաստացու կենդանության ժամանակ, նրա իսկ հսկողությամբ և հովանավորությամբ. «Ինչպես երևում է Ս. Ղազարու վանքի նյութական դրությունը նախանձելի չէր, երբ որ արքայությունը Մելքոնյանին անցավ և սա ստիպված պիտի լիներ շատ ջանք գործ դնել մենաստանի ապահովության համար: Երևի թե դրամի պակասությունն էր պատճառը, որ վերջացնելով մի քանի գրքերի (Կովզնոյ և այլոց) տպագրությունը, որոնք տակավին Մխիթարի ժամանակ էին սկսված, հիշյալ միաբանությունը 1751-ից մինչև 1769 թիվը, բազի մեկ կամ երկու աննշան տետրակից ու օրացույցներից, ոչինչ չէր տպագրում»⁸:

«Փիլիսոփայություն» առաջին հատորը ամբողջովին նվիրված է տրամաբանությանը և ըստ Հ. Անասյանի՝ «Տրամաբանության հատորը ԺԸ և ԺԹ դարերում որպես փիլիսոփայության դասագիրք օգտագործվել է Հայոց ուսումնարաններում և այլ նպատակով էլ:

Նրա մասին գրվել են զանազան մեկնողական աշխատություններ, որոնք տարածվել են ընդօրինակություններով: Շարադրվել են նաև նույն հատորի համառոտություններ: Այդ նյութերի ուսումնասիրությունը, անտարակույս, նոր էջեր կտա հայ փիլիսոփայության պատմությանը»⁹:

Ընդգրկված նյութով և ծավալով խիստ ինքնատիպ են «Փիլիսոփայություն» Բ և Գ հատորները: Բ հատորի տիտղոսաթերթում գրված է. «Առաջին մասն բնաբանություն», իսկ Գ-ի տիտղոսաթերթում՝ «Երկրորդ մասն բնաբանություն»: «Բնաբանություն» տերմինը մեկնաբանվում է որպես «Գիտություն բնության և բնության երևույթների մասին»¹⁰: «Փիլիսոփայություն» Բ և Գ մասերում ընդգրկված նյութը որոշ վերապահումներով համապատասխանում է Ֆիզիկային: Կան նաև կեն-

⁶ Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 449:

⁷ Ֆրանսիացի աստվածաբան Անտոն Կովզինի (1640–1695) «Փիլիսոփայությունը», Վրթանես Ասկերյանից առաջ, XVII դ. թարգմանել է Ղուկաս Խարբերդեցին: Այդ թարգմանություններից այսօր մեզ միայն մասեր են հայտնի Երևանի և Երուսաղեմի մատենադարանների ձեռագրերից (տե՛ս Հ. Ա. ն ա ս յ ա ն. Հայկական մատենագիտություն. հ. Ա. Երևան, 1959, էջ 958–967): Նշենք նաև, որ Հ. Անասյանը Կովզինը գրել է Գովզին ձևով:

⁸ Ա. Երիցյան. Վենետիկի Մխիթարյանք. Թիֆլիս, 1883, էջ 44:

⁹ Հ. Ա. ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 959:

¹⁰ Է. Աղայան. Արդի հայերենի բացատրական բառարան. հ. 1, Երևան, 1976, էջ 195:

սարանությունը նվիրված դրուխներ: Ահա մի քանի գլուխների վերնագրեր. «Յաղագս ժամանակի», «Յաղագս շարժման», «Յաղագս աշխարհի առհասարակ», «Յաղագս տարրական աշխարհի», «Յաղագս տարերաց», «Յաղագս ծննդյան և ապականություն», «Յաղագս տնկոց» (բույսերի մասին – Ա. Փ.), «Յաղագս անհնոյ»: Այսպիսով, գեոևս XVIII դ. կեսերին, թեկուզ և թարգմանաբար, հայ իրականություն մեջ կար ֆիզիկային և կենսաբանությունը նվիրված 1277 էջանոց տպագիր մի աշխատություն: Սա աննախադեպ իրողություն է հայ բնագիտական մտքի պատմության մեջ: «Փիլիսոփայություն» վերջին Դ հատորը վերնագրված է «Բարոյական և համաբնաբանություն»: Ընդգրկված են հիմնականում դեղագիտությունը, բարոյախոսությունը և հոգևորին առնչվող նյութեր:

Վ. Ասկերյանի Կովզինի «Փիլիսոփայություն» հայերեն թարգմանությունն առաջինն անդրադարձել է Լեոն: Խոսելով Մխիթար Սեբաստացու գործի շարունակողների մասին, նա նշել է. «Այս մեծ աշխատավորների շարքը Մխիթարի մահից հետո անմիջապես բաց է առնում Հ. Վրթաճեն Ասկերյանը (1720–1810), որին պատկանում է մաքուր և կանոնավոր հայերենով թարգմանություններ կատարելու պատիվը: Այդ թարգմանությունների մեջ հայտնի են մանավանդ «Փիլիսոփայությունն ըստ անստերիլ և անսայթաք վարթասյետություն սրբոյն թովմայի, Բաժանեալ ի չորս հատորս, զոր արարեալ է հոր Անտոնի Կովզնոյ Լեմովկեցոյ, աստվածաբան վարդապետի Փարէս քաղաքի» և «Թեսալոսի Հրահանգք Բարոյական իմաստասիրություն»: Երկու գործերը, երկու հիշատակարաններ կաթողիկական գիտություն, այնքան լավ ընդունելություն գտան մեզանում, որ դասագրքեր դարձան: Պատճառը Ասկերյանի ընտիր հայկաբանությունն էր»¹¹:

Վ. Ասկերյանի թարգմանություններից նշենք ևս երեքը. Դոմինկոս Բոհուրսեան, Խոկմունք քրիստոնէական (Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի, 1771, 176 էջ): Ղուկաս Փինեղեան, Խրատք յաղագս կրօնաւորական կատարելութեան (Վենետիկ, տպ. Դեմետրիոս Թեոդոսյանց, 1779, 440 էջ): Քսավերիոս Դոռնեանց, Քարոզք համառօտք, (Վենետիկ, տպ. Դեմետրիոս Թեոդոսյանց, 1781, 856 էջ)¹²: Վ. Ասկերյանի թարգմանություններում ամենածավալունը Ֆրանսիացի պատմաբան Շառլ Ռոլենի (1661–1741) «Պատմություն հռովմեական» վեցհատորանոց աշխատությունն է¹³: Այս թարգմանությունն առաջին հատորի տիտղոսաթերթում նշված է. «Պատմութիւն Հռոմէական. ի հիմնարկութենէ Հռովմայ Մինչեւ

¹¹ Լ. Ե. Ն. Հայոց պատմություն. հ. III, Երևան, 1946, էջ 1009:

¹² Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512–1800), էջ 151, 165, 169:

¹³ Շառլ Ռոլենի «Հնախոսություն» մենագրության գրաբար թարգմանությունը գարձյալ իրականացրել են Վենետիկի Մխիթարյանները: Գևորգ և Էդուարդ Հյուրմյուզյան եղբայրներն այն թարգմանել են ֆրանսերեն բնագրից և լույս ընծայել Սուրբ Ղազարի տպարանում (հ. Ա, 1825, 620 էջ, հ. Բ, 1825, 690 էջ, հ. Գ, 1826, 526 էջ, հ. Դ, 1827, 810 էջ, հ. Ե, 1828, 551 էջ, հ. Զ, 1829, 690 էջ): Տե՛ս Encyclopedia Americana, vol. 23, New York, 1975, p. 636: Ս. Շ տ ի կ յ ա ն. Հայ նոր գրականության ժամանակագրություն. 1801–1850, Երևան, 1973, էջ 100, 140:

Ի Պատերազմն Ակտիոնի, Այսինքն Մինչեւ Ի Վախճան Հասարակապետութեանց: Արարեալ Ռոլէնի Գաղյացոյ: Թարգմանեալ Յիտալական Բարբառոյ՝ Հ. Վրթանես Վարդապետի Ասկերեան Ի Մխիթարեան Միաբանութենէ. Եւ զգուշաւոր քննութեամբ բաղադատել ընդ Գաղղիական բնագրին, յաւելմամբ ծանօթութեանցն ի Մանուէլ Վարդապետի Զախջախեան: Հատոր Առաջին, 1816. ապրիլի Ի Վենէտիկ Վանս Սրբոյն Ղազարու»¹⁴:

Ե. Ռոլենի «Պատմութիւնն հռովմեական» գրաբար թարգմանութիւնը կազմում է վեց մեծադիր հատոր: Առաջին, երկրորդ և երրորդ հատորները հարատարակվել են 1816-ին Վենետիկում, իսկ մյուս երեք չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հատորները, դարձյալ Վենետիկում մեկ տարի անց՝ 1817-ին: 4695 էջ ընդհանուր ծավալով հիշյալ աշխատութիւնն ընդգրկում է Հռոմի պատմութիւնը հիմնադրումից (մ.թ.ա. VII դար) մինչև հանրապետութեան անկումը (մ.թ.ա. I դար): Մինչ այդ և դրանից հետո Հռոմի պատմութեանը նվիրված նման ծավալով հայատառ որևէ ուսումնասիրութիւն չի հրատարակվել:

Վ. Ասկերյանը՝ Մխիթար Սեբաստացու ամենասիրելի և երախտապարտ սաներից ավագագույնը, անառարկելի հեղինակութիւն էր Սուրբ Ղազար վանքում: Հին և նոր օտար լեզուների նրա իմացութիւնը, դասական հայերենի բացարձակ հմտութեամբ տիրապետումը և Մխիթարյանների թարգմանական դպրոցի հիմնադիր լինելու պարագան խոր հարգանք է ներշնչել Մխիթարի ուխտի հաջորդ սերունդներին. «Չամչյանը, Ինճիճյանը, Ագոնց Ստեփանոսը, Մկրտիչ և Հարութիւն Ավագերյան եղբայրները, Մանուէլ Զախջախյանը, Իգնատիոս Փափագյանը և շատ ուրիշներ, որոնք Վենետիկցոց պարծանքը կարող են համարվել, հիշյալ աբբազոր (ակնարկում է Ստեփանոս Մելգոնյանին – Ա. Փ.) և յուր մի քանի ընկերակիցների (Վրթանես Ասկերյանի) աշակերտները և հառաջացածներն էին»¹⁵:

Արևելահայ իրականութեան մեջ Վ. Ասկերյանի առաջին գնահատողներից մեկը Լեոն է: Իր սեղմ բնորոշումով՝ նա հնարավորինս փորձել է ներկայացնել Ասկերյան բանասերին, լեզվաբանին և թարգմանչին. «Իր մոտ 100-ամյա կյանքը Հ. Վրթանեսն անցկացրեց երկարաշունչ և մանրազնին ուսումնասիրութիւններով և մեծ հմտութիւնն ցուց տվեց մանավանդ լատիներեն լեզվի մեջ, այնպես որ աշխատութիւններ ունի գրած և այդ լեզվով: Նրա թարգմանական գործերի մեջ հիշատակելի է և Ռոլենի «Հռոմէացւոց Պատմութիւն» վեց խոշոր հատորները, որոնք լույս տեսան 19-րդ դարում»¹⁶:

1951 թ. Մխիթարյանները նշել են միաբանութեան հիմնադրման 250-ամյակը: Հասկանալի պատճառներով այդ տարիներին խորհրդա-

¹⁴ Տիտղոսաթերթում հիշատակված Մանվել Զախջախյանը (1770–1835) Վենետիկի Մխիթարյան միաբանութեան ականավոր բառարանագիրներից և թարգմանիչներից է: Առավել հայտնի է նրա 1864-ին Վենետիկում լույս տեսած «Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տալիկ բարբառ» 895 էջանոց աշխատութիւնը: Հայ բառարանագրութեան ուղադրով երևույթներից է 1837-ին գարձյալ Վենետիկում լույս տեսած նրա «Բառագիրք ի բարբառ Հայ և իտալական» 1508 էջանոց աշխատութիւնը (տե՛ս Սուրբ Ղազար: Մարտիկանք Մխիթարյան միաբանութեան. Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 102–103):

¹⁵ Ա. Երիցյան. նշվ. աշխ., էջ 45:

¹⁶ Լեոն. նշվ. աշխ., էջ 1009:

յին Հայաստանում հնարավոր չէր որևէ նյութ հրատարակել այդ առթիվ: Միայն 1950-ականների վերջին և 1960-ականների սկզբներին հնարավորություն ընձեռվեց նշելու հոբելյանական այդ տարեթիվը: Առաջին անգրադարձերը, ինչպես և սպասվում էր, տպագրվել են սփյուռքահայության հետ մշակույթի կապի կոմիտեի օրգան «Սովետական Հայաստան» ամսագրի էջերում: Վ. Ասկերյանի անունը հիշյալ ամսագրում երևաց 1960-ականների սկզբին. «Մխիթարյանների առավել ակնազարկ թարգմանիչներն են Գ. և Է. Հյուրմյուզյանները, Ե. Թոմաճյանը, Ա. Բագրատունին, Մ. Զախարյանը, Վ. Ասկերյանը, Ա. Ճարյանը, Ա. Տիրոյանը, Ա. Ղազիկյանը»¹⁷: Շուրջ 20 տարի անց, Լ. Տեր-Պետրոսյանն իր ուսումնասիրություններից մեկում XVІІІ դ. հայագրի նշանավոր թարգմանիչների պատվավոր փառանգում Մխիթար Սեբաստացու և այլոց անվան կողքին միանգամայն իրավացիորեն գրել է նաև Վ. Ասկերյանի անունը. «18-րդ դարի թարգմանիչներից արժանի են հիշատակության Մխիթար Սեբաստացին, Պետրոս Թիֆլիսեցին, Հովհան Թոխատեցին, Պետրոս Մուհամբեյանը, Աթանաս Մկրասյանը, Ղուկաս Խարբերդցին, Վրթանես Ասկերյանը, Մարգար Շահրիմանյանը և ուրիշներ»¹⁸: Վ. Ասկերյանի համառոտ կենսագրականը Խորհրդային Հայաստանում առաջին անգամ հրատարակել է Գ. Ստեփանյանը¹⁹:

Վ. Ասկերյանի գործունեությունն ահա թե ինչպես է ներկայացրել այն միաբանությունը, որի երգվյալ և նվիրյալ սպասավորն էր Վ. Ասկերյանը. «Ճանչցավ հայ ազգը Վ. Ասկերյանի արդյունքը, և անոր իմաստության համբավը տարածվեցավ մինչև Հնդկաց և Պարսից աշխարհները, և ջուղայեցիք կոկեցին գինքը մեծագլուխ Վրթանես վարդապետ: Որով և իրավացի է, որ Վ. Ասկերյանի անունը՝ Բագրատունու և Հյուրմյուզի անուններուն հետ կից ընթանա, իբր առաջապահ հայկական լեզվի մաքրություն և հստակության համար աշխատած գնդին, և առաջիններն ոսկեգարյան պարզ և հստակ, հայեցի գրողներուն մեջ (ընդգծումը՝ Ա. Փ.)»²⁰:

Ծիշտ և ճիշտ 90 տարի ապրեց «Մեծագլուխ Վրթանես վարդապետ» հայտնի հորըրջամամբ Վ. Ասկերյանը: Այդ տարիներից շուրջ 75-ը նա անմնացորդ նվիրեց հայագիտության բազմազարյան անդամստանին: Քչերին է վիճակված ի վերուստ շնորհված աստվածատուր այդ երջանկությունը: Քանզի ձգնակյաց կուսակրոն քահանայի գերագույն երջանկությունը Սուրբ Մեսրոպ Մաշտոցից սկսած մեր ժողովրդի մտավոր մշակույթին անմնացորդ նվիրումն է եղել:

¹⁷ Փ. Ա ն թ ա բ յ ա ն. 250-ամյա վաստակով.— «Սովետական Հայաստան», 1962, № 2,

էջ 22:

¹⁸ Լ. Տ ե Ր - Պ ե տ Ր Ո Ս Յ ա ն. Հայ հին թարգմանական գրականություն. Երևան, 1984,

էջ 22-23:

¹⁹ Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան. հ. Ա, Երևան, 1973, էջ 119:

²⁰ Մխիթարեան Յորբելեան, էջ 76:

ВРТАНЕС АСКЕРЯН И ЕГО ПЕРЕВОДЧЕСКОЕ НАСЛЕДИЕ

АСАТУР ПАШАЯН

Резюме

Впервые вниманию широкого круга читателей представлена краткая биография и научная деятельность видного армянского лингвиста, теолога, переводчика, ученика и соратника Мхитара Себастици Вртанеса Аскеряна (1720–1810). В. Аскерян родился в Константинополе. Образование получил в школе при монастыре конгрегации мхитаристов в Венеции, на острове св. Лазаря, членом которой он стал в 1743 г. Занимался переводческой деятельностью. Переводил в основном с латыни, греческого и итальянского на грабар. В 1750 г. в Венеции на грабаре был издан четырехтомник французского теолога XVII в. Антона Ковдина "Философия". В 1816 и 1817 гг. в Венеции в переводе Аскеряна с итальянского на грабар был издан шеститомник французского историка Шарля Ролена (1661–1741) "Римская история".

VRTANES ASKERYAN AND HIS HERITAGE OF TRANSLATION

ASATUR PASHAYAN

Summary

The article for the first time presents the short biography and scientific activity of prominent Armenian linguist, theologian, translator, pupil and supporter of Mekhitar Sebastitsi Vrtanes Askeryan (1720-1810). V. Askeryan was born in Constantinople. He was educated in monastery school of the island of St. Lazarus. In 1743 he was elected a member of the Mekhitarist Congregation. He mainly did translations from Latin, Greek and Italian into Grabar (Old Armenian language). In 1750 in Venice was published Askeryan's translation of French theologian Anton Kovdin's "Philosophy" in 4 volumes in Grabar. In 1816 and 1817 was published Askeryan's another translation from Italian into Grabar, the book of French historian Charles Rolen (1661–1741) "History of Rome" in 6 volumes.